ՎԵՐԱՕԾՎԵՑ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՇՐՋԱՆԻ ՄԵԾ ՍԱՄՍԱՐ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Օգոստոսի 1-ին Ախալքալաքի շրջանի Մեծ Սամսար գյուղում, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ձեռամբ, վերաօծվեց Սուրբ Աստվածածին եկեղեցին: Աղոթատունը նորոգվել է գյուղի հիմնադիր Տ. Բարսեղ քահանայի շառավիղներից մեկի՝ ռուսաստանաբնակ Սամվել Բարսեղյանի միջոցներով:

Արարողությանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Համլետ Մովսիսյանը, Ախալքալաքի քաղաքապետ Նաիրի Իրիցյանը, «Ջավախք» ժողովրդական շարժման նախագահ Նորիկ Կարապետյանը, Ջավախքի մտավորականների ֆորումի համանախագահ Դավիթ Ռստակյանը, շրջանի մտավորականներ և մշակույթի գործիչներ:

Արարողության ավարտին Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանն իր օրհնությունը բաշխեց հավաքված հավատացյալներին: Սրբազան Հայրը շնորհավորեց ուխտավորներին այս մեծ իրադարձության առիթով և կոչ արեց՝ շարունակել հավատարիմ մնալ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու մեր հայրերի ավանդությանը: Վազգեն Սրբազանը բարձր գնահատեց Սամվել Բարսեղյանի բարեգործությունը, որը, ի հիշատակ իր ծնողաց, նախաձեռնեց եկեղեցու վերականգնման աշխատանքները:

Մեծ Սամսարի տարածքում գտնվում են 11-12-րդ դարերի Խաչ Մաղալ ժայռափոր եկեղեցին և 11-13-րդ դարերի ժայռափոր երեք եկեղեցիներ ու մեկ մատուռ: Կան նաև նշված դարաշրջանին պատկանող խաչքարեր: Այս ամենը ուշադրությամբ պահվում և պահպանվում է տեղի հայ բնակչության կողմից: Արդեն 1850-ականներին կառուցվել էր գյուղամիջի Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը 1899 թվականին խոնարհվել էր երկրաշարժից, բայց 1902 թվականին վերականգնվել տեղի բնակչության միջոցներով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ